

Պատասխաններ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի – 2022-2023 ուս. տարի
10 – րդ դասարան

1. ա-սխալ; բ-սխալ; գ-սխալ; դ-սխալ (յուրաքանչյուրը՝ 0.25միավոր)

2. ա-սխալ; բ-սխալ; գ-ճիշտ; դ-ճիշտ (յուրաքանչյուրը՝ 0.25միավոր)

3. ա. քաղաքն իր արվարձաններով և արբանյակ բնակավայրերով հանդերձ, որոնք տարածականապես միաձուլված են կենտրոնական քաղաքի հետ (0.5միավոր)

բ. ափաքերում (0.5միավոր): Աշակերտը կարող է նաև մանրամասնել, սակայն դա չի պահանջվում և գնահատականի վրա ազդեցություն չունի

4. Իսլանդիա

5. ա. թայֆուն բ. կամպոս

6. ա. 1) $10.000 + 5000 = 15000$ մարդ (0.5միավոր)

2) $15.000 : 15000000 \times 100\% = 0.1\%$

Եթե գործողություններում առկա է միայն հաշվարկային սխալ, սակայն բաղադրիչները ճիշտ են՝ նշանակել 0.75միավոր: Եթե պատասխանը ևս ճիշտ է ստացել՝ 1միավոր:

բ. 1) $400\text{մմ} = 0.4\text{մ}$; $10\text{կմ}^2 = 10.000.000\text{մ}^2$; $100\text{կմ}^2 = 100.000.000\text{մ}^2$

2) $0.4\text{մ} \times 10.000.000\text{մ}^2 = 4\text{մլն մ}^3$ (0.5միավոր)

3) $0.4\text{մ} \times 100.000.000\text{մ}^2 = 40\text{ մլն մ}^3$ (0.25միավոր)

4) $40\text{մլն մ}^3 \times 20\%/100\% = 8\text{մլն մ}^3$ (0.25միավոր)

Եթե աշակերտը մեկ գործողությամբ է կատարել վերջին երկու քայլերը, միանգամից շնորհել 0.5միավոր: Եթե գործողություններում միայն առկա է հաշվարկային սխալ, սակայն բաղադրիչները ճիշտ են՝ յուրաքանչյուր սխալի համար նվազեցնել 0.25միավոր: Եթե ամբողջը լիարժեք ճիշտ է ստացել՝ 1միավոր:

7. ա. Հետևյալ 7 պետություններից ցանկացած 4-ը ընդունել որպես ճիշտ պատասխան. Սերբիա, Սլովենիա, Խորվաթիա, Մոնտենեգրո (Չերնոգորիա), Հյուսիսային Մակեդոնիա (Մակեդոնիա), Բոսնիա և Հերցեգովինա, Կոսովո (յուր. 0.25 միավոր)

բ. Հետևյալ 6 պլատֆորմներից ցանկացած 4-ը ընդունել որպես ճիշտ պատասխան. Աֆրիկյան, Հնդկական, Արաբական, Ավստրալական, Հարավամերիկյան, Անտարկտիկական (յուր. 0.25 միավոր)
Եթե աշակերտը նշել է չորսից ավելի պատասխան, ցանկացած սխալ պատասխանի դեպքում ընդհանուր միավորը նվազեցնել 0.25միավորով:

8. ա. Խոնավ հասարակածային անտառ, սավաննա, տափաստան, բարեխառն անտառ

բ. Մումբայ, Էդինբուրգ, Մինսկ, Աստանա

Երկու դեպքում էլ իր դիրքում ճիշտ նշված պատասխանի համար աշակերտին շնորհել 0.25միավոր

9. ա. Այլումինաձուլությունը էներգատար արտադրություն է և Հայաստանում հիմնվել է այն բանից հետո, երբ Սևան-Հրազդան կասկադի շահագործման շնորհիվ առաջացավ էլեկտրաէներգիայի ավելցուկ: Բացի այդ, սկզբնական շրջանում կարծում էին, որ հնարավոր կլինի հումքը ստանալ Թեժ լեռան նեֆելինային սիենիտներից: Այլ՝ երկրորդական պատճառի ներկայացման կամ բացատրության թերությունների դեպքում՝ առավելագույնը 0.5միավոր

բ. Որպես հիմնական պատճառներ ընդունել հետևյալներից որևէ երկուսը. 1) Թոչնամիսը որակյալ է և համեմատած այլ կենդանիների՝ էժան; 2) Թոչունները արագ են բազմանում և շատ տեղ չեն պահանջում; 3) Թոչունները պահանջկոտ չեն կերի նկատմամբ; 4) Թոչնաբուծությունը, բացի մսից, տալիս է բազմազան այլ արտադրանք ևս: Այլ՝ երկրորդական պատճառի ներկայացման կամ բացատրության թերությունների դեպքում՝ առավելագույնը 0.5 միավոր:

10. ա. Ասիայում (0.5միավոր)

բ. Գյուղատնտեսության ոլորտում գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրման շնորհիվ կարճ ժամանակահատվածում բերքատվության և մթերատվության կտրուկ աճը կոչվում է կանաչ

հեղափոխություն **(0.5միավոր)**: Այն թույլ տվեց Ասիայում և մասնավորապես Չինաստանում ու Հնդկաստանում մեծապես լուծել պարենային ապահովվածության խնդիրը, ինչով պայմանավորված բարելավվեց նաև հանրային առողջության վիճակը և աճեց կյանքի միջին տևողությունը **(0.5միավոր)**

գ. ԽՍՀՄ փլուզումը և սոց. ճամբարի անկումը Եվրոպայում հանգեցրին Արևելյան Եվրոպայում սոցիալ-տնտեսական ճգնաժամի և կյանքի որակի անկման, ինչի արդյունքում որոշ երկրներում կյանքի միջին տևողությունը նույնիսկ կրճատվեց **(0.5 միավոր)**

Իմաստային ճիշտ պատասխանները ընդունել որպես լիարժեք ճիշտ: Թերի պատասխանների դեպքում շնորհել 0.25միավոր

11. ա. Ուրմիա **(0.5միավոր)**: Լիճը ի սկզբանե բավական աղի է, ծանծաղ և գտնվում է չորային գոտում՝ սնվելով մի քանի գետերի շնորհիվ: Հետևաբար, մակերեսի կրճատման պատճառներն են՝ 1) Հարևանությամբ գտնվող Թավրիզի դաշտը ոռոգելու նպատակով լիճ թափվող գետերից կատարվում է մեծաքանակ ջրառ, ինչի արդյունքում լիճը հաճախ սնուցում չի ստանում **(0.25միավոր)**: Լճի ցամաքելով հնարավոր է դառնում ավերին կուտակվող աղի հսկայական զանգվածները արդյունահանել **(0.25միավոր)**:

բ. Այդպիսի կետերի անվերջ բազմություն գոյություն ունի առնվազն Չինաստանում **(0.5միավոր)**: Չնայած Չինաստանի տարածքը ձգվում է 5 ժամային գոտիների սահմաններում, տնտեսական նպատակահարմարությունից ելնելով ամբողջ երկրում գործում է միևնույն ժամանակը **(0.5միավոր)**:

Եթե աշակերտը նշում է, որ այդպիսի կետեր գոյություն ունեն, սակայն իրական օրինակ չի կարողանում ներկայացնել, շնորհել 0.25միավոր:

12. 1-Դ; 2-Զ; 3-Ե; 4-Բ (յուր. 0.5միավոր)